ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ (ԵՊՀ օրինակով)

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՅՈՒ. Գ.

Ժամանակակից աշխարհում տեղի է ունենում սոցիալական տարածության սոցիոմշակութային փոխակերպում, ինչը անմիկ հասարակությունում առաջացնում է կոնֆլիկտայնության աճի վտանգ: Այդ վտանգն արտահայտվում է հատկապես դեռահասության և երիտասարդության շրջանում, երբ սոցիալականացման ընթացքը առանձնապես ինտենսիվ է: Սոցիոմշակութային միջավայրին հարմարվելը, սեփական ինքնության որոնումը դառնում են ժամանակակից երիտասարդության կարևորագույն խնդիրները: Եվ նշված սոցիոմշակութային համատեքստում երիտասարդական ենթամշակույթների դերը սոցիալականացման գործընթացում էապես ուժգնանում է: Դրանք, մի կողմից, համապատասխանում են երիտասարդ տարիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին, իսկ մյուս կողմից՝ ճկուն են, արագ արձագանքում են կատարվող փոփոխություններին: Երիտասարդական ենթամշակույթները երիտասարդներին օգնում են հարմարվել և ներգրավվել սոցիալական հարաբերությունների առկա համակարգում:

Ուսանողական տարիները մարդու կյանքի այն ժամանակահատվածն են, երբ հատուկ կարևորություն են ստանում անձի կայացումը, սեփական ինքնության ձևավորումը: Ուսանողական տարիները առանցքային դեր են խաղում անձի սոցիալականացման և այնպիսի կարևորագույն ճգնաժամերի հաղթահարման համար, որոնք Է. Էրիքսոնը դիտարկում է «էգո-ինքնություն - դերային դիֆուզիա» և «մտերմություն-մեկուսացում» հակադրության մեջ[1]:

Սոցիալականացման «էգո-ինքնություն - դերային դիֆուզիա» փուլն առանցքային է ինքնության ձևավորման տեսանկյունից: Այս ընթացքում դեռահասների առջև ծառանում են սեփական անձի վերաբերյալ առկա բոլոր պատկերացումները միաբանելու, իմաստավորելու և անցյալից դեպի ապագա ուղղորդվելու խնդիրները: Ճգնաժամի բարեհաջող հաղթահարման պարագայում դեռահասի մեջ ձևավորվում է ինքնության զգացում, իսկ ոչ բարեհաջող ընթացքի դեպքում դեռահասն անվերջ փնտրտուքների մեջ է հայտնվում, որոնք համակցվում են սեփական անձի, սոցիալական խմբում և

---

[1] *См.* **Эриксон Э.** *Идентичность: юность и кризис. Пер. с англ.(Общ. ред. и предисл. Толстых А. В. , М., 1996).*

հասարակության մեջ սեփական դերի վերաբերյալ կասկածների, կյանքի անորոշ հեռանկարների հետ: Այս ճգնաժամին անմիջապես հաջորդում է «մտերմություն – մեկուսացում» ճգնաժամը, որը ենթադրում է անցում դեպի հասուն տարիքի խնդիրների լուծում (ընկերություն, ամուսնություն, երեխաների ծնունդ)՝ հիմնվելով սոցիալականացման նախորդ փուլում ձևավորված հոգեսոցիալական ինքնության վրա:

Անդրադառնալով ուսանողական ենթամշակույթի վերլուծությանը՝ հարկ է նշել, որ ենթամշակույթը սոցիոմշակութային շերտավորման կարևորագույն տարրերից է: Ենթամշակույթի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել հասարակության արժեհամակարգի ձևավորման մեխանիզմները, դրանց փոխակերպումները ժամանակակից աշխարհում և մշակույթի ներքին կառուցվածքը: Իսկ ուսանողական ենթամշակույթի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել նաև ուսանողության կենսառճի մասին:

Ուսանողական ենթամշակույթի առանձնացումը պայմանավորված է նրանով, որ ուսանողությունը յուրօրինակ սոցիոմշակութային խումբ է, որը միավորված է ընդհանուր սոցիալական նպատակով և գործունեությամբ՝ բարձրագույն կրթություն ստանալով: Ուսանողական ենթամշակույթը, հիմնվելով ընդհանուր գործունեության վրա, ներառում է յուրօրինակ արժեքանորմատիվ համակարգ, որը պայմանավորում է ուսանողների կենսառճը և ձևավորում է կյանքի որոշակի ռազմավարություններ: Ուսանողական ենթամշակույթն առանձնահատուկ է նաև նրանով, որ ամենամոտն է հասարակության գերակա մշակույթին. ի տարբերություն շատ այլ երիտասարդական ենթամշակույթների, այն չի հակասում գերակա մշակույթի արժեքներին: Չի հակադրվում, այլ ձգտում է դրան: Նման փոխազդեցության շնորհիվ հարստանում են երկուսն էլ: Հասարակության մեջ ձևավորվում են մշակութային կյանքի նոր տարրեր, հարստանում է լեզուն, ձևավորվում են նոր տեսակետներ: Ուսանողները երիտասարդական միջավայրում առաջատար դեր են կատարում: Միևնույն ժամանակ, փոխակերպվող հասարակություններում ուսանողական, ինչպես նաև ընդհանուր առմամբ երիտասարդական ենթամշակույթին բնորոշ է գերակա մշակույթին, այդ թվում՝ իշխանական համակարգերին, հասուն մարդկանց, սոցիալական ինստիտուտներին և մշակութային նմուշներին հակադրվելը:

Որպես սոցիալական կազմակերպություն՝ համալսարանը եղել և մնում է բազմագործառութային հաստատություն, որի նպատակներն են մշակույթի միջսերնդային փոխանցումը, բարձրագույն որակավորում ունեցող մասնագիտական կադրերի պատրաստումը և երիտասարդների սոցիալականացումը: Համալսարանի թաքնված գործառույթների շարքին կարելի է դասել նաև ուսանողական ենթամշակույթի ձևավորումը: Քիչ թե շատ երկար ժամանակահատվածի ընթացքում համատեղ գործունեությունը ձևավորում է ուսանողության խմբային ինքնություն: Եվ այդ ինքնությունը հակադրվում է ինչպես արտահամալսարանական միջավայրին, այնպես էլ

իշխանությանը, համալսարանի վարչակազմին և պրոֆեսորադասախոսական կազմին:

Ուսանողությունն օժտված է նորարարական հզոր ներուժով և հասարակության զարգացման համատեքստում սոցիալապես առավել կարևոր միավոր է: Բարձրագույն կրթությունն անձի սոցիալականացման այնպիսի փուլ է, երբ երիտասարդը գիտակցաբար ընտրում է ապագա զարգացման սեփական ուղեգիծը: Հենց բուհում է ձևավորվում նոր սերնդի քաղաքական, ստեղծագործական և բիզնես-էլիտան: Համապատասխանաբար՝ տվյալ սոցիո-մշակութային խմբի կողմից յուրացվող արժեքներն ու նորմերը պայմանավորում են ամբողջ հասարակության զարգացման հեռանկարները: Արդի հայ ուսանողության սոցիալականացումը տեղի է ունենում բարդ, փոփոխություններով լի, անոմիկ ժամանակահատվածում: Եվ երիտասարդների սոցիալական հարմարեցման և սոցիալականացման գործում ուսանողական ենթամշակույթի դերն էլ ավելի է կարևորվում: Այսօր ուսանողական ենթամշակույթին բնորոշ է նոր կրթական պրակտիկաների առաջացումը և հին կրթական պրակտիկաների փոխակերպումը: Այսպիսով՝ ժամանակակից ուսանողական ենթամշակույթին բնորոշ են.

- *հիմնարար արժեքների բազմազանությունը,*
- *սոցիալականացման միասնական ուղղվածության բացակայությունը,*
- *ապահարմարվողականության և ապանույնականացման ռիսկերի աճը,*
- *ուսանողների նորարարական ինքնարտահայտման և ինքնիրացման հնարավորությունների բազմազանությունը:*

Այդուհանդերձ, որպես ուսանողական ենթամշակույթի նորմատիվ արժեքային համակարգի հիմք՝ կարելի է առանձնացնել ուսանողների վերաբերմունքը կրթությանը, որը բուհում սովորելու դրդապատճառ է և պայմանավորում է ուսանողների կենսառճը: Այն ներառում է նրանց կրթական և ժամանցային վարքի կայուն մոդելները, որոնք ամրագրվում են արտաքին խորհրդանշական արտահայտության ձևերում:

Սոցիոլոգիայում ուսանողական ենթամշակույթը դիտարկվում է մի քանի հայեցակետերով: Առաջինը ենթադրում է շերտավորման համակարգում ուսանողության սոցիալական կարգավիճակի ուսումնասիրություն, երկրորդը՝ ուսանողական ընդդիմադիր շարժումների վերլուծություն: Սոցիոլոգները անդրադարձել են նաև ուսանողական ենթամշակույթի արտաքին ակներև հատկանիշների ուսումնասիրությանը՝ դրանք դիտարկելով Պ. Բուրդյեի առաջարկած սոցիալական՝ ուսանողական, կրթական, պրակտիկաների եզրութաբանական համակարգում[2]: Կրթական պրակտիկաները սոցիալական պրակտիկաների տեսակ են, որի ընթացքում կրթական գործընթացի սուբյեկտները, օգտագործելով կրթության և այլ ինս-

---

[2] *Տե՛ս* Бурдье П. *Практический смысл, СПб., 2001.*

տիտուտների ռեսուրսները, վերարտադրում, զարգացնում և ձևավորում են կրթական հարաբերությունների նոր մոդելներ: Այսօր ավանդական կրթական պրակտիկաները փոխակերպվում են. ուսանողները համատեղում են կրթությունը և զբաղվածությունը, որոշ դեպքերում ուսուցումը կազմակերպվում է անհատական կրթական պլաններով, գործում է հեռաուսուցման համակարգը, տեխնոլոգիական և մեթոդական առաջընթացի շնորհիվ ավելանում է լսարանային հաղորդակցության կազմակերպման ձևերի բազմազանությունը, փոփոխվում են ուսանող-դասախոս-բուհ եռակողմ հարաբերությունները: Առաջանում են նոր կրթական պրակտիկա-ներ՝ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների, անհատական ստեղծա-գործական նախագծերի, ուսանողների գիտահետազոտական ինքնուրույն աշխատանքերի օգտագործմամբ: Նոր կրթական պրակտիկաների դաշտի ընդարձակմանն առանձնահատուկ խթան են դառնում ակադեմիական շարժունության արդի հնարավորություն-ները և բոլոնյան գործընթացը:

Յուրաքանչյուր ենթամշակույթի կարևոր բաղադրիչ է առանձնահատուկ լեզվական դիսկուրսը: Սովորելու ընթացքում ուսանողը ձեռք է բերում մասնագիտություն, որը պահանջում է առարկայի իմացություն և հատուկ եզրույթների տիրապետում: Այդպես ձևավորվում է բուհի, ֆակուլտետի, բաժնի, ամբիոնի յու-րահատուկ մասնագիտական լեզվական դիսկուրսը: Տեխնիկական մասնագիտություն ունեցող ուսանողների լեզուն տարբերվում է հումանիտար մասնագիտության ուսանողների լեզվից: Բացի մաս-նագիտական լեզվական դիսկուրսից, ուսանողներն օգտագործում են ոչ միայն լեզվական ընդունված խորհրդանիշները, այլև յուրահատուկ «երիտասարդական լեզու», որը պարունակում է երիտասարդական ենթամշակույթին բնորոշ առանձնահատուկ բառեր և արտահայտություններ, որոնք պարզ են միայն երիտասարդների համար: Ուսանողական լեզվական դիսկուրսում միաձուլվում են չորս գործոններ՝ ուսանողական գործունեությանն առնչվող ժարգոնային բառեր, տարբեր տարածաշրջանների բարբառներ, ոչ նորմատիվ բառապաշար, մասնագիտական լեզվական եզրույթներ:

Ժամանակակից ուսանողների համար բարձրագույն սոցիալական արժեք են ընկերությունը, առողջությունը, սերը: Պակաս կարևոր չեն նաև ընտանիքը, նյութական բարեկեցությունը, կրթությունը և աշխատանքը: Իսկ որպես ուսանողական ենթամշակույթի խորհրդանշական արժեք՝ կարելի է առանձնացնել ստուգման գրքույքը, համառոտագրությունը, ծածկաթերթիկը և գրադարանի տոմսը: Մի շարք ուսանողական ավանդույթներ առնչվում են բարձր կուրսեցիներից կրտսերներին փորձի փոխանցմանը՝ դասախոսների վարքի, մականունների, նրանց մասին առասպելների, հետաքրքիր դեպքերի վերաբերյալ: Ուսանողական ենթամշակույթի ևս մեկ առանձնահատկություն է ցինիզմի հասնող հումորը, որը միաժամանակ և մարտահրավեր է իրականությանը, և միայնակությունից ու ձանձրույթից փրկվելու, վախին դիմադրելու միջոց, և ի վերջո՝ ապստամբող էակների միավորման եղանակ:

Ուսանողական յուրօրինակ հումորի առկայությունը ձևավորված ենթամշակույթի հատկանիշ է:

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիայի կողմից 2014 թ. իրականացված ԵՊՀ կրթական միջավայրի վերաբերյալ ուսանողների գնահատականների հետազոտության տվյալների համաձայն, ուսանողներն իրենց բնութագրում են որպես դասապրոցեսի գործուն մասնակիցներ (տե՛ս աղյուսակը)[3]: Հատկանշական է, որ կրթական ակտիվությունը տարբեր է տար-բեր ֆակուլտետներում. ճշգրիտ և բնական գիտությունների ֆակուլտետներում այն հարաբերականորեն ավելի ցածր է, քան հումանիտար ֆակուլտետներում: Բացի այդ, կրթական ակտիվության վրա նշանակալի ազդեցություն ունի վճարովի և անվճար համակարգում սովորելու գործոնը. անվճար սովորող ուսանողները ավելի ակտիվ են[4]:

	Դաս պատասխանելը և տնային աշխատանք կատարելը	Լսարանային հանձնարարություններ կատարելը	Ուսանողական միջոցառումներին մասնակցելը
Միշտ	13.7%	16.6%	4.6%
Հաճախ	48.1%	48.8%	24.1%
Հազվադեպ	34.2%	27.9%	50.6%
Երբեք	4.1%	4.1%	20.7%
Չկան այդպիսիք	0.0%	2.6%	0.0%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

Աղյուսակ. Ուսանողների ակտիվությունը՝ որքան հաճախ են մասնակցում բուհական գործունեությանը:

Բավական ցածր է ուսանողների աշխատաշուկայում ներգրավվածությունը: Աշխատում է հարցված ուսանողների 11,1%-ը, որոնց միայն 1/3-ն է աշխատում մասնագիտությամբ: Աշխատաշուկայում առավել ներգրավված են ժուռնալիստիկայի, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի ֆակուլտետների ուսանողները: Համեմատաբար ցածր է արևելագիտության և հայ բանասիրության ֆակուլտետների ուսանողների ներգրավվածությունը աշխատաշուկայում: Բարձր կուրսեցիները ավելի շատ են ներգրավված այնտեղ՝ ի տարբերություն ցածր կուրսերի ուսանողների: Համեմատաբար բարձր է նաև անվճար համակարգում սովորողների և արական սեռի ուսանողների ներգրավվածությունը աշխատաշուկայում: Սակայն ուսանողի առաջադիմությունը աշխատելու հետ նշանակալիորեն կապված չէ:

[3] *Երևանի պետական համալսարանի ուսանողների գնահատականները ԵՊՀ կրթական միջավայրի վերաբերյալ: ԵՊՀ կիրառական սոցիոլոգիական հետա-զոտությունների լաբորատորիա, Ե., 2014:*

[4] *Տե՛ս նույն տեղում:*

Երիտասարդական զվարճանքներին, խնջույքներին և այլ արտահամալսարանական միջոցառումներին ուսանողների մասնակցությունը շատ ավելի բարձր է, քան այլ քաղաքացիներինը (տե՛ս գծապատկերը):



Գծապատկեր. Ուսանողների մասնակցությունը երիտասարդական զվարճանքներին, խնջույքներին, ուրախ միջոցառումներին

Բնականաբար, ուսանողական ենթամշակույթը շատ բազմազան է. այն մի շարք մշակութային ենթաշերտեր է պարունակում: Եվ դրանցից յուրաքանչյուրը ազդեցություն է թողնում ուսանողների կյանքի ռազմավարությունների ձևավորման վրա: Ուսանողական ենթամշակույթի ներսում առանձնացող ենթաշերտերերը կարելի է դասակարգել ըստ հետևյալ չափանիշների. կրթական, ուսանողական պրակտիկաներ և բարձրագույն կրթության արժեքի գիտակցում: Նշված գործոնները սերտորեն փոխկապակցված են և գտնվում են փոխազդեցության մեջ. բարձրագույն կրթության արժեքի գիտակցումը պայմանավորում է կրթական, ուսանողական պրակտիկաները, իսկ վերջիններս՝ բարձրագույն կրթության արժեքի գիտակցումը: Բարձրագույն կրթության արժեքը գիտակցող և բարձր գնահատող ուսանողներին սոցիալական պրակտիկաների մա-կարդակում սովորաբար բնորոշ են վարքի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են՝ ակտիվ մասնակցությունը դասերին, գրադարանից, համացանցից, գրախանութներից օգտվելը, գիտական միջոցառումներին, գիտական հ
անդեսներում հոդվածներ տպագրելը և այլն:

Հիմք ը[5]նդունելով նշված երկու գործոնը՝ Ի. Սոտնիկովը առանձնացնում է ժամանակակից ուսանողական ենթամշակույթի հինգ ենթաշերտերը՝ դրանք պայմանականորեն անվանելով «իդեալիստներ», «պրագմատիկներ»,

---

[5] *Տե՛ս* **Сотников И.** *Диссертация на тему “Дифференциация студенческой субкультуры в современном российском обществе”, 2009.* (http://www.dissercat.com/content/differentsiatsiya-studencheskoi-subkultury-v-sovremen-nom-rossiiskom-obshchestve)

«կարիերիստներ», «լողաններ» և «պատահականներ»: Սոտնիկովի դասակարգումը հարմարեցնելով արդի հայաստանյան իրականությանը և ուսանողների կրթական պրակտիկաներին՝ կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը Հայաստանի ուսանողության շրջանում.

*1. **«Իդեալական ուսանողներ»:** Այս հատվածի համար կրթությունն ինքնին արժեք է: Նրանց բնորոշ են ակտիվ կենսառճը, նորմատիվ կրթական պրակտիկաների գիտակցված և շահագրգռված իրականացումը: Այս ուսանողները կրթության հետ կապված բոլոր հարցերում բարեխիղճ են և հետևողական. (մասնագիտական գրականության ուսումնասիրություն, դասախոսություններին և սեմինարներին գործուն մասնակցություն, ընթացիկ և եզրափակիչ քննություններին մանրակրկիտ նախապատրաստություն, կուրսային և ավարտական աշխատանքներին հատուկ ուշադրություն, բուհի գիտական միջոցառումներին մասնակցություն, ինքնակրթություն և այլն): Սակայն բուհի հասարակական կյանքին մասնակցության գործում «իդեալական ուսանողներն» այնքան էլ ակտիվ չեն: Նրանց բնորոշ է «հաջողության ռազմավարությունը». հասնել անձնային և սոցիալապես կարևոր նպատակների՝ ընդունելի միջոցներով: Տվյալ ենթամշակույթի էական հատկանիշներն են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների պարտադիր տիրապետումը, խոսքում գիտական և մասնագիտական եզրույթների հաճախակի օգտագործումը, գործնական հագուստի ոճը և բարեկիրթ վարքը՝ ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների հետ հաղորդակցվելիս: Այս ուսանողների համար գիտելիք ստանալը ավելի արժեքավոր է, քան բարձր գնահատականը, կրթություն չի նույնացվում դիպլոմ ստանալու հետ, իսկ դասախոսները ռեֆերենտ խումբ են:*

*2. **«Արդյունավետ ուսանողներ»:** Սրանց համար բարձրագույն կրթության արժեքն այն է, որ այն ապագայում դառնում է նյութական բարեկեցության երաշխիք: Առաջին պլան են մղվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ապագա մասնագիտության եկամտաբերությունը և կրթության օգտակարությունը, կրթական գործընթացի տնտեսական արդյունավետությունը: Այս ուսանողները ջանասիրաբար ուսումնասիրում են կոնկրետ առարկաներ, դրանք ընտրում են՝ ելնելով հետագայում կիրառելիության հավանականությունից: Այս խմբի նեկայացուցիչները կրթական գործունեության հանդեպ ընտրովի վերաբերմունք ունեն՝ կարևորելով մասնագիտական պատրաստականությունը: Ջերմեռանդորեն զբաղվում են ինքնակրթությամբ՝ օգտագործելով ինչպես տեղեկատվության ավանդական (գրադարան), այնպես էլ ժամանակակից (համացանց) մեթոդները: Ակտիվ մասնակցում են գիտահետազոտական աշխա-տանքներին: Զբաղվում են սպորտով, հասարակական կյանքի նկատմամբ անտարբեր են: Խոսքում հաճախ օգտագործում են մասնագիտական բառապաշար: «Բարեկեցության ռազմավարությունը» ենթադրում է անձնապես կարևոր նպատակներին հասնելը ընդունված նորմատիվ միջոցներով: Այս ուսանողների համար հավասարաչափ կարևոր են և՛*

օգտակար կիրառական գիտելիքի ու հմտությունների ձեռքբերումը բուհում, և՛ բարձր գնահատականները:

*3. **«Կարիերիստներ»:** Ուսանողների այս հատվածը բարձրագույն կրթությունն ընկալում է որպես հասարակության մեջ առաջխաղացման միջոց: Նրանց բնորոշ է «խառը ակտիվ» կենսաոճը. կրթական գործընթացում ընտրովի ակտիվություն և բուհի հասարակական կյանքին գործուն մասնակցություն: Այստեղ նույնպես գործում է «բարեկեցության ռազմավարությունը», սակայն այս խումբը ներկայացնող ուսանողների համար ընդունելի է նաև սահմանային՝ սոցիալապես չընդունված միջոցների օգտագործումը նպատակին հասնելու համար: Կարիերիստներն ակտիվ հաղորդակցվում են, մասնակցում են բուհի հասարակական կյանքին: Խոսքում հաճախ գործածում են մասնագիտական արտահայտություններ: Մեծ ուշադրություն են դարձնում հագուստին՝ գերադասելով դասական ոճը: Նրանց համար առաջնային կարևորություն ունի բոլոր ընդունելի և ոչ ընդունելի ճանապարհներով բարձր գնահատական ստանալը, իսկ բուհում գիտելիքի ձեռքբերումը մղվում է հետին պլան:*

*4. **«Ճոճանակներ»:** Այս ուսանողների համար բարձրագույն կրթությունը նախ և առաջ հեղինակություն վայելող կարգավիճակ է՝ «բարձրագույնավարտ». կրթության բովանդակային մասը նրանց չի հետաքրքրում: Նրանք ցուցաբերում են իրավիճակային ակտի-վություն, նորմատիվ ուսանողական պրակտիկաներից ընտրում և կատարում են միայն այն, ինչն իրենց հետաքրքիր է և շատ ջանք չի պահանջում: Ուսանողության այս հատվածին այնքան էլ չեն հուզում բուհի ներլսարանային ակտիվության ձևերը՝ դասախոսու-թյուններին և սեմինարներին մասնակցելը: Նրանք գերադասում են ներգրավվել հասարակական և ընդդիմադիր քաղաքական ու քաղաքացիական միջոցառումներում: «Ճոճանակները» խոսքում օգտագործում են ինչպես մասնագիտական, այնպես էլ երիտասարդական խոսակցական բառապաշար: «Փորձի և սխալների ռազմավարությունը» լավագույնս նկարագրում է այս ուսանողների կենսաոճը. նրանք փորձարկում են տարբեր ռազմավարություններ, չեն ձգտում առավելագույն գնահատականների: Նույնը կարելի է ասել նաև գիտելիքի մասին. այս խմբի ներկայացուցիչները չեն հավակնում բուհում մատուցվող գիտելիքը յուրացնելուն :*

*5. **«Պատահականներ»:** Ուսանողների այս խումբը չի գիտակցում կրթության արժեքն ընդհանրապես, նրանք պասիվ են, հետաքրքրված չեն կրթությամբ և կողմնորոշված են ոչ նորմատիվ կրթական պրակտիկաներ կիրառելուն (բացակայել դասախոսություններից և սեմինարներից, խանգարել դասապրոցեսը, արտագրել, դիմել բոլոր տեսակի կոռուպցիոն հնարքներին՝ զուտ բուհից չհեռացվելու նկատառումներից ելնելով): Այս տիպի ներկայա-ցուցիչներն իրագործում են «գոյատևման ռազմավարություն», որը ենթադրում է հարմարվողականություն գոյություն ունեցող սոցիալական իրականությանը: Նրանց խոսքն անփույթ է և անհարգալից, վերաբերմունքը համակուրսեցիների և դասախոսների նկատմամբ՝ արհամարհական: Ավելին,*

նրանք հաճախ ծաղրում և պիտակավորում են «իդեալական ուսանողներին»՝ կրթությունը չգնահատելով որպես արժեք: Անշուշտ, ուսանողության նկարագրված տիպերը ևս մեկ անգամ վկայում են ուսանողական ենթամշակույթի բազմազանության և ստեղծագործական ներուժի մասին: «Իդեալական», «արդյունավետ» ուսանողները և «կարիերիստները» փոխլրացնում են միմյանց՝ ապահովելով բուհի ստեղծագործական ներուժի զարգացումը, «ճոճանակները» կիրառում և փորձարկում են նախորդ խմբերի գործունեության արդյունքները, իսկ «պատահականները» բուհի ներսում ապահովում են այն բացասական օրինակը, որը խթանում է առաջադեմ ուսանողությանը՝ պահպանելու նորմատիվ ուսանողական պրակ

ТРАНСФОРМАЦИЯ СТУДЕНЧЕСКОЙ СУБКУЛЬТУРЫ
(на примере ЕГУ)

МЕЛКУМЯН Ю. Г.

Резюме

Социокультурные трансформации современного социума затронули все сферы общественной жизнедеятельности. В этом смысле особую важность приобретает изучение трансформаций студенческой субкультуры в армянском обществе. Студенческая субкультура примечательна тем, что объединена общей целью и родом деятельности – получением высшего образования. Студенты обладают серьезным инновационным потенциалом и в контексте развития общества являются одним из наиболее важных социальных элементов. В процессе образования студент не только выбирает траекторию своего дальнейшего развития, но и определяет траекторию развития общества в целом. Именно в вузе формируется политическая, творческая и бизнес-элита нового поколения. Проведенные лабораторией прикладных социологических исследований ЕГУ опросы позволили выделить следующие группы в студенческой субкультуре: «идеальные студенты», «эффективные студенты», «карьеристы», «качели» и «случайные».

THE TRANSFORMATION OF STUDENT SUBCULTURE

(on YSU example)

Y. MELKUMYAN

Abstract

Sociocultural transformations of modern society affected all the social systems.In this respect, the study of student ssubculture transformation in the Armenian society is of vital importance. Student subculture is unique due to its common goal and activity domain – the higher education. Students possess great innovative potential and are one of the most important social elements in the context of social development. During the university education, students not only choose the trajectory of personal further development, but also determine the trajectory of development of the society as a whole. University forms the political, creative, and business elite of the new generation. The research conducted by YSU laboratory of applied sociological research revealed the following groups of students "ideal students", "effective students", "career makers", "swing students" and "lurkers".